

կամ ուրիշի կը հրամցընեն իբրև ախոր-  
ժելի քաղցրաւենի մը, որովհետեւ խո-  
տին լեզի ու անհամ մասունքը զտուած  
ու անուշցած կ' րլան :

ԲԺՇԿԱՆԴՐԻՒՆ

**Ըստարեղինաց ակուային վրայ լրած ազդեցութիւնը :**

|| Յօտերս | արէզ բնալոյծը շաքարէ-  
զինաց մարդուս ակռային վրայ ըրած  
ազդեցութեանը քննութիւններէն հե-  
տեւեալ չորս դիտողութիւնը կ'ընէ .

Ա. Ի՞արակ շաքարը, թէ եղեգի ե-  
զեր է և թէ բանջարի՝ միշտ վնասա-  
կար է առողջ ակռաներուն, ոչ այնչափ  
իր ստամոքսին մէջ հանած կազովը՝ որ-  
շափ անմիջապէս մեր ծագքից գործա-

բանացը հետ շփուելուն համար :

Բ. ԽԱՆ որ շաքարի յագեալ լուծ  
ման մը մէջ ակռայ մը ձգուելու ըլլայ ,  
իր բնալուժական կազմութիւնը այն  
պէս կ'այլայլի , որ սոսնձային գոյացու-  
թեան մը կը փոխուի , փայլունութիւնը  
կը կորսուի , ու ծակ ծակ կ'ըլլայ , ու  
շատ դիւրաւ ալ կը քայքայի :

Գ. Լ. Համբամանացս պատճառ  
ու աղատ թթուի մը ներգործութիւ-  
նը չէ, որովհետեւ յայտնի է որ շաքա-  
րին մէջ չկայ, հապա շաքարին ձրկ-  
տումն է որ ակռայի կրային խարսխին  
հետ կ'ուզէ բնալուծաբար զուգադրի:

Դ. Եղուային արծնուածքը ոսկրային  
մասէն աւելի քիչ կը վնասուի . և պատ-  
ճառը այն է որ կրածնի փլորաւորը թնա-  
լուծական հակազդիչներուն ներգործու-  
թեանը շատ աւելի լաւ կրնայ գիմակա-  
լել, քան կրի ծծմբուտը :

## ФУРУНЧУКИ ГРЯДКИ

**Այսկերպան վերջին խնդիրն ու պատերազմը<sup>1</sup> :**

1853-09018011

8. Երկրորդ օրը (աես Մայիս 31) Աւստրիոյ գահինը պատասխան տուաւ . Աւստրիա Դանու բեան իշխանութիւններէն Ռուս զօրաց ելլու խաղաղութեան հաստատութեանը քայլ մը տու նուած կը սեպէ : Աւստրիա որոշած է որ Դրան հաւանութեամբ այն գաւառները բռնէ , բայց ասով Ռուսիոյ գէմ թշնամութիւն ցուցընել չե միտք :

Ա ի եննայու մէջ Գաղղիոյ և Մեծին բրիտանից լիազօր գեսպանները մէկ կողմանէ ու Աւստրիոյ արտաքին գործոց պաշտօնեայն մէկալ կողմանէ իրարու ծանուցագիր կու տան։ Իրեք տէ բութիւնները միաբան են որ Բարձրագոյն Դրան Ռուսիոյ կայսերական արքունիքաց հետ յարաբեր բութիւնները չեն կրնար հաստատուն ու անեկան ըլլալ։ Ես եթէ Ռուսիոյ միջն հիմայ Մոլտուկիոյ Վալագիոյ ու Սերվիոյ վկայ ունեցած պաշտամանութիւնը չդադիր, և թէ որ Դրան իր այդ գաւառաց տուած արտօնութիւնները միաբան տէ բութեանց երաշխաւորութեանը տակ ցիյայ։ բ.

թէ որ Դաննուքի նաւագնացութիւնը ու անոր բերանները ամենայն արգելվներէ ազատ չը լսն .  
+ ։ եթէ 1841ին Յուլիսի 13ին ստորագրուած  
դաշնադրաւթիւնը նորէն չքննուի միարանու-  
թեամբ ստորագրող կողմերուն, եւրոպական հա-  
ւասարակիցութեան շահուն համար . Դ . և թօէ թիւ  
Ռուսիա ցդադարի Բարձրագոյն Դրան հպատա-  
կաց վրայ ցըցուցած պաշտօնական պաշտպանու-  
թենէն, և թէ որ Գաղղիա, Աւստրիա, Միջն  
Երիտասարդական, Բրուսիա և Ռուսիա միարան չը լսն  
խնդրելու Տաճկի աերութենէն, առանց ամենին  
իր պատուայն և անկախութեանը արատ մը բերե-  
լու, իր այլ և այլ քրիստոնեայ հպատակաց կրօ-  
նական արտօնութեանըց հաստատութիւնը ու  
պահպանութիւնը : — Աւստրիա ալ իր կողմանէ  
ինքզինք երկու արևմտեան աերութեանց դիմաց  
միտքան կը ճանչնայ, ու մինչև ընդ հանուր խաղա-  
ղութեան հաստատութիւնը իրուսա-  
տանի հետ ամենին իրաւախոհութեան շմանելու .  
մինչև որ Ռուսիա այս վերսիցիւալ չորս պայման-  
ները ամրուցապես չենդունի . այլ Աւստրիա իր  
կողմանէ ազատ կը ճանչնայ ինքզինք խաղաղու-  
թեան ուրիշ պայմաններ ալ աւելցրնելու թէ որ  
ինքն ալ բռնագրափի պատերազմին մէջ մտնելու :

Գաղղիացւոց և Անգղիացւոց նաւախումբի զօր-  
քը Աւանտ կզգինելը կ'ելլան (տես 13) :

#### 10. Աւտորիոյ արտաքին գործոց պաշտօնեայ

Պուլ կոմոք պաշտօնագիր մը կը դրէ , Բեգրապուրկ կեցող Աւստրիոյ գեսպան էսդէրհազի կոմին (աես 8) . Ավելամութեան տէրութեանց առաջարկած խաղաղութեան չորս պայմանները Ռուսիոյ գահը մը կը ներկայացուի . Աւստրիա ալ միաբան է որ այդ պայմանները անանորինելի հարկաւոր են հաստատուն խաղաղութեան մը հասնելու համար , ուսափ կը յանձնէ Բեգրապուրկի գահը մը որ ընդունելու գէմ չդնէ : (Տ . 26) :

12 . Ճերմակ ծովու նաւահանգիստները (Արխանկէլ , Օնէկա և այլն) պաշարման վիճակին մէջ կը դրուին Գաղղիոյ ու Մէծին Բրիտանիոյ միացեալ նաւախումբէն :

13 . Դաշնակցաց ծովային ու ցամքային զորքը Ալանտ կղզները կ'ելսն (Տ . 8) . ու կար , Նէրիը , Բարորվալ և Տէշն ծովակալաց ու Պարահ-է-Տ' Խիէ զօրավարին առաջնորդութեամբը Պոմարունալ գնդակակոծել կը սկսին , որն որ 18ին անձնատուր կ'ըլլայ : Ռուսաց պահապան զօրքը ու Պատիսոյ զօրավարը պատերազմական գերի Կ'իյնան , գաշնակիցք ամրութիւնները կը փլցընէն :

Բասքեւիչ մարտախար Դանուբի բանակէն Վարսաւիա կը գառնայ :

Պեռլինի գահինը պաշտօնագիր մը կը խաւրէ իր Բեգրապուրկի գեսպանին , հաստատութիւն տալով Աւստրիոյ ամսոյս 10ին (Տ . անդ) խրկած ծանուցագրին . և կը յուսաց որ Ռուսաստան իր կառավարութիւնը բամբասովաց կը ցուցընէ իր խաղաղութեան հակամիտութիւնը :

17 . Աւստրիա ու Բրուսիա Գերմանական ազգային ժողովոյն կը ներկայացընէն Բեգրապուրկի , Բարիզու , Լոնտոնի , Վիեննայու ու Պեռլինի գահին ցացաց յունիսի 29ին և յուլիսի 21ին ու 24ին , արեւելեան խնդրոյն վրայ իրարու գրուած ծանուցագրիները . այս ներկայացուցմանէ վերջը՝ կը հանցուի որ Ռուսաց Դանուբեան գաւառներէն ելլելը , խաղաղութեան նորէն հաստատուելուն գիշաւոր ու կարևոր քայլ մը առնուած պիտի սեպուի :

20 . Աւստրիացի զօրաց բանակ մը Մարտաջախտի տեղակալ Քորոնինի կոմին հրամանատրութեանը տակ գէպ ՚ի Վալաքիա կը սկսի մանալ :

22 . Էօմեր փաշա Պուբրէշտ կը մտնէ . 26ին ալ կը հասնի Տէրվիշ փաշան իրը Դրան արտաքոյ կարգի աեսուչ : Տէրվիշ փաշային կը ծանուցանէ թէ Աւստրիացիք առ ժամանակ մի երկիրս պիտի բըռնեն իրրեւ Սուլդանին գաշնակից . հին արտօնութիւնները անխախտ պիտի մնան . աւստրիացի քաղաքական փախատականները երկրէն գուրս պիտի ելլեն : (Տ . 31) :

23 . Անդղեացոց Մէրանա շոգենաւը ռուս Լաբոնիոյ գլխաւոր Գոլա քաղաքը կը ռմբակոծէ :

25 . Պարոն Բրոբէշ-Օսդէն Աւստրիոյ Գերմանական գաշնակութեան քովիլ լիազը պաշտօնայն , ազգային ժողովոյն քանի մը խորհրդածութիւններ կը ներկայացընէ արեւելեան խնդրոյք վրայ . ու կը հէտևացընէ որ ժողովոյն պատույն կը վայլէ որ բոլոր Եւրոպան երկու բաժնող խըն-

դրէ մը Գերմանիա ալ երկայն տաեն ինքզինքը ՚ն . ռու չբռնէ :

26 . Ներըլլոս կոմոք ծանուցագիր մը կը խրկէ առ Կորչապով իշխան ՚ի պատասխանի Աւստրիոյ առաջարկութեանցը (Տ . 10) . Ռուսիա չորս պայմանները կը մերժէ . ինքը պաշտպանողական վիճակի մէջ պիտի կենայ՝ սպասելով որ խաղաղութեան ընդունելի պայմանները իրեն առաջարկուին , բայց երշած է հաստատապէս որ իր եր կիրները ու իցէ կողմանէ վրայ եկած յարձակ . մանցը գէմ պաշտպանէ : Կոյն իմաստով պատասխան մըն ալ Բրուսիոյ կը խրկուի (Տ . 13) . Բեգրապուրկի գահինը չորս պայմանները ընդունելը իր պատույն ու իր նիւթեական և քաղաքական շահուցը գէմ կը սեպէ : Դանուբեան գաւառաց Ռուսաց զօրին գորերէն պարպուիլ բաւական էր Բրուսիոյ և Աւստրիոյ Բեգրապուրկի խրկած ինդիբը համելու թէ իրը իրենց առանձին տէրութեան շահուն և թէ բոլոր Գերմանիոյ նկատմամբ : Ասզինցութեամբը . կը Կարծէ Ռուսիա՝ որ Ապրիլի 20ին յաւելեալ յօդուածը գրելու պատճառաւանք առած առիթը կը գարդի , ինչպէս նաև Բրուսիոյ խոստմանը՝ որով գաշնակիցըաւ Աւստրիոյ հէտ որ այս վերջի աէրութեանս վրայ յարձակմանց ժամանակ՝ իրենց հէտ մէկ ըլլայ :

31 . Տէրվիշ փաշան Պուբրէշտի մէջ առժամանակեայ մատակարարութեան ժողով մը կը հաստատէ , Կանդակուցէն իշխանին նախագահութեամբը . (Տ . 22) :

Վիեննայի գահինը չոհական մը կը հաստարակէ իր գերմանական արքունեաց քով ունեցած նուիրակացը : Անով Կայսերական նուիրակաց կը յանձնուի որ իմացընէն իւրաքանչիւր տէրութեանց թէ ինչ յարգ կուտայ Աւստրիա , թէ որ Գերմանական ազգային ժողովն ալ ամսոյս 8ին ծանուցագրին չորս պայմանները ընդունելու ըլլայ . Աւստրիա կը փափաքի որ բոլոր Գերմանական Աւստրիոյ ունեցած տէրելլը առնելով որոշ քաղաքական դրբի մը մէջ մնայ , հրատարակելով որ Ռուսիոյ հէտ իրաւախոհութիւն 1 մը ունենալու հիմը այս չորս առաջարկութեանց ընդունուելէն կը կախուի : Գերմանիոյ անտարբէր կենալը իր պատույն վրաս կը բերէ , Կըսէ : Աւստրիա շտարակուսիր որ Դանուբեան գաւառները բանելով ապրիլի գաշնադրութեան համեմատ գործած պիտի սեպուի :

Անդղեական ու Գաղղիական նաւախումբ մը Ֆէպրիէ-Տէրուենդ ժովակալին առաջնորդութիւնը Քամչաղքայի ժովեզերացը վրայ Բեգրապաւլովք քաղաքին ու բերդին հէտ կը զարնուին , և Դաշնակիցք կորստովէ կը քաշուին :

1. Գլ. Accomodement.